# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼՆԵՐ/2022/Հ-44 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ԳՆՈՄՈՆ | ԳՆՈՄՈՆ | ԳՆՈՄՈՆ | ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ | Մեդալը բաղկացած է հնգանկյուն կախիչից և նրա կապօղակով ամրացած հիմնամասից: Հիմնամասը պատրաստվում է պղնձի համաձուլվածքից և ունի էմալով պատված տարբեր երանգներ: Հիմնամասի հիմքը շրջանաձև է, մակերևույթի մակերեսը փայլատ որակի է, չափերը՝ շրջանի տրամագիծը՝ 38 մմ է իսկ հաստությունը՝ 2 մմ է: Ներս ընկած շրջանագծի պարագծի երկայնքով փայլուն մեծատառերով, էսքիզին համապատասխան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տառատեսակով գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐ» բառերը, իսկ ներքևի կենտրոնական հատվածում գրված է «30» թիվը և երկու կողմերից, երեք տողով փայլուն մակերևույթով՝ գծեր, որից ներքև ուռուցիկ փայլուն «ԱՄՅԱԿ» բառը: Ներքին շրջանագծի կենտրոնում տեղակայված է ՈԶ զինանշանը, որը դեպի կենտրոն ուռուցիկ է, ունի փայլուն որակ, չափերը ուղղահայաց՝ 22 մմ է, իսկ հորիզոնական՝ 18 մմ: Զինանշանը ունի էմալով պատված տարբեր երանգներ: Զինանշանի երկու կողմերով տեղադրված է դափնու ճյուղեր 15-ական զույգ տերևներով, ոսկեգույն: Հիմնամասի դարձերեսի կենտրոնական հատվածում շրջանաձև մեծատառերով գրված է «ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԵԴԱԼ» բառերը, իսկ կենտրոնական հատվածից 5 մմ վերև «30» թիվը, ուղղահայաց 10 մմ և հորիզոնական 17 մմ չափերով, որի ներքևի հատվածում մեծատառերով գրված է «ԱՄՅԱԿ» բառը, չափսերը ուղղահայաց՝ 2 մմ, հորիզոնական 10 մմ: Ներս ընկած |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | շրջանակի ներքևի հատվածում ուռուցիկ ոսկեգույն գրված է «1992-2022» թվերը, ներքևում հորիզոնական գծով ընդգծված: Թվերի չափերը ուղղահայաց 4 մմ, ընդհանուր՝ հորիզոնական 23 մմ: Կախիչը պատրաստվում է ամուր մետաղից և ունի հնգանիստ բազմանկյուն ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող կարմիր ժապավենով: Ժապավենի աջ մասում երեք մոխրագույն եզրաշերտեր են: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները նույնն են՝ 39 մմ: Կախիչի վերևի մասը 27 մմ է, ներքևինը՝ 46 մմ: Կախիչի վերին մասը կենտրոնից մինչև ներքևի գագաթը՝ 50 մմ: Կախիչը հակառակ երեսում ունի հատուկ ասեղային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Համապատասխան տուփերով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ШИН ЛИДЕР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՄԵՂԱԼՆԵՐ/2022/Հ-44 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |